



«ՎԱՆԱՅ ՁԱՅՆ»

ՀՅՐ ԼԻՔԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
100-ԱՄԵՎԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄՑ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԸՄՐԵ

# ՄԵՆԵ ԵՆԵ ԱՊՐՓԱՆ

ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԸ, ԺԱՄԸ 5:00

12-րդ յայտագիր՝ 26 Մայիս 2023

Հիւր՝ **ԸՆԿ. Սարգիս Նոխուսեան (Գանատա)**  
ՀՅՐ ԼՊՄ Ընդհանուր Վարիչ, Մարմինի նախկին ատենապետ

Նիւթ՝ **Անցնող տասնամյակներուն Պատանեկան միութիւններու ռատիո-հաղորդումները**

badanegan  **LIVE**  voiceofvan



**ԱՎՍՍ** 26 ՄԱՅԻՍ 2023

# Դժուար երկընտրանք Արցախի եւ իսաղաղութեան միջեւ



## Մենք արդէն գրաճանաչ ենք



0

Նախորդ շաբաթ Հրանդ Տինք Վարժարանի առաջին դասարանցիները՝ դասվար Դոնարա Բերուբեանի գլխավորութեամբ խանդավառութեամբ մասնակցեցան Ընթերցման Տօնին: Աշակերտները երգ ու բանաստեղծութեամբ փառաբանեցին Մեսրոպեան այբուբենը: Մեծ էր ծնողներու ոգևորութիւնը, որովհետեւ իրենց զաւակները օգտւողութեան մէջ դարձան գրաճանաչ: Դպրոցի փնօրէն Հերիքնազ Աազեան շնորհատրեց աշակերտները եւ մայրիկները այս հրաշալի իրողութեան առթիւ:

ՀԻՆՎԱԿՐԹԻ  
25  
ՄԱՅԻՍ  
2023  
ԲԻ. (SAYI) 13162  
ԿՆ  
2 ԼԻՐԱ

# J A M A N A K

# ԺԱՄԱՆԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Կալաթասարայի պատմական նամակատան երդիֆին տակ եզակի և յատկանշական ձեռնարկ մը

## ԳԻՐՔԻ ԾՆՈՐՀԱՆՆԻՄ

«Արաս»ի կողմէ հրատարակուած «Pulun Kanadında İstanbul'dan Dünyaya» հատորին ծանօթացման հասարկութիւն փայտուն անցաւ.



Սեւեռնիկ Սէօնմէգ, Արման Արբեան և «Արաս»ի գլխաւոր խմբագիր Ռոպէր Քոփթաշ (Լուսանկար՝ Մկրտիչ Արծիւեան)

Երէկ յետմիջօրէին Կալաթասարայի պատմական նամակատան երդիֆին տակ տեղի ունեցաւ գիրքի շնորհանդէս մը: Սա իսկապէս եզակի և յատկանշական ձեռնարկ մըն էր, որու ընթացքին ծանօթացուեցաւ վերջերս «Արաս» հրատարակչութեան լոյս ընծայած «Pulun Kanadında İstanbul'dan Dünyaya» գիրքը: Հաստատուած այս հատորը կ'ընդգրկէ «Գամէր» նամականիշերու տան ամբողջ պատմութիւնը և անոր այժմու սեփականատիրոջ՝ Արման Արբեանի ընտանեկան ժառանգութիւնը կը ցուցանէ՝ սերունդէ սերունդ ֆիրմայի հետամուտ ողիսական մը:

Գիրքի շնորհանդէսը անցաւ ոգեւոր մթնոլորտի մը մէջ: Արման Արբեան ձեռնարկին մասնակցեցաւ իր ընտանիքի անդամներուն՝ Մերէյ Արբեանի, Քաթիա Արբեան-Թորոսի և Լարա Արբեան-Սիրահլիբի հետ: Բոլորն ալ, անշուշտ, արդար հպարտութիւն մը

կ'ապրէին այս փուլին՝ նկատի ունենալով, որ «Արաս»ի հրատարակած կոթողային գործը կը յաւերժացնէ Արբեան ընտանիքին մեծ ժառանգութիւնը այս բնագաւառէն ներս: Բոլոր ներկաներուն համար հետաքրքրական էր հետեւիլ Արման Արբեանի հետ կատարուած հարցազրոյցին, զոր վարեց Սեւեռնիկ Սէօնմէգ, որ գիրքը հրատարակութեան պատրաստած է: Ներկայացուեցաւ նաև տեսաֆիլմ մը, որ «Գամէր» զրոյշման թուղթերու տան պատմութիւնն ու գործունէութիւնը կը ցուցանէր: Հուսկ, PTT-ի կողմէ յուշանուէր մը յանձնուեցաւ ի նշանաւորումն այս արժէքաւոր գիրքի շնորհանդէսի օրունան:

Յայտագրի գործադրութեան վերջ ներկաները շրջայց մը կատարեցին նոյն առթիւ կազմակերպուած ցուցահանդէսի սրահին մէջ, նաև սարքուեցաւ ընդունելութիւն մը:

ՆՈՐ  
**ՄԱՐՄԱՐԱ**  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

1940  
83. Տարի

ԼՈՐԻԵՐ   ՅՈՒՇԱՅԵՏԻՐ   ԳԻՐԵՐ   ԱՐԽԻԻ   ՄԵՐ ՄԱՍԻՆ   ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ   25 Մայիս 2023, Հինգշաբթի

«ՊՈԼՍԱՋԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 2017-ԴԱՐԻ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ»  
ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՉ

Հոկտեմբերին պիտի սարքուի նաեւ այս հատորի Իսթանպուլեան շնորհանդէսը

Գրած էինք արդէն որ երեկ, Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանէն ներս պիտի սարքուեր շնորհանդէս մը՝ նուիրուած «Պոլսահայ գրականութիւնը 20րդ դարի կեսից մինչեւ մեր օրերը» համահայկական գիտաժողովի նիւթերու ժողովածուի հրատարակութեան: Հատորի խմբագիրն է բանասիրական գիտութիւններու թեկնածու, մեր համայնքին ծանօթ հայաստանցի երիտասարդ մտաւորական, Տոչ. Զնարիկ Աբրահամեան: Ուրախութեամբ կը տեղեկանանք նաեւ որ Ամեն. Ս. Պատրիարք Հօր բարձր հովանաւորութեամբ յառաջիկայ Հոկտեմբերին, Սրբոց Թարգմանչաց տօնի շրջագծով պիտի սարքուի նաեւ այս հատորի Իսթանպուլեան շնորհանդէսը:



«Սփիւռք» գիտա-ուսումնական կեդրոնէն ստացանք շահեկան լրատուութիւն մը, այդ կարելոր է պոլսահայութիւնը հետաքրքրող ձեռնարկի մասին: Ստորեւ, արեւմտահայերէնի վերածելով, մեր ընթերցողներուն կը ներկայացնենք այդ լուրը.-

24 Մայիսին «Համագգային» հայ կրթական ու մշակութային միութեան եւ Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» գիտա-ուսումնական կեդրոնի կազմակերպութեամբ սարքուեցաւ «Պոլսահայ գրականութիւնը 20րդ դարի կեսից մինչեւ մեր օրերը» համահայկական գիտաժողովի նիւթերու ժողովածուի շնորհանդէսը: